«ՓՈՐՁԸ ՓՈՐՁԱՆՔ ՉԷ»

«Արցախ» հայրենակցական բարեգործական միությունը էր եկել Հադրութի շրջանի Խծաբերդի Ղոշաբեխաջի տարրական դպրոցի վարիչ Սերյոժա Ջավադյանը և բորբոքված խոսում էր այն մասին, թե տարիներ առաջ փակված դպրոցի շենքի վերանորոգումը չի կարողանում գլուխ բերել, թեև 1989 թ. օգոստոսից սկսած բախել է շրջանային թե՛ կուսակցական և թե՛ իշխանության դռները։ Իսկ «հոգատար մարդիկ» տարիներ առաջ քանդել, տարել էին լքված դպրոցի շենքի դռներն ու լուսամուտները, հատակն ու առաստաղը, թողնելով միայն թիթեղապատ տանիքն ու բարձ պատերը։ Իսկ դպրոցի վարիչը (մասնագիտությամբ չինարար), լինելով Սիսիանի բնակիչ, հայրենասիրական մղումով, բնականաբար առեղափոխվել է այդ գյուղը և փորձել հարություն տալ մարած դպրոցին։ Եվ 1989 թ. իր ուժերով վերանորոգել է մի դասասենյակ ու սկսել դասեր անցկացնել առաջին, երկրորդ, երրորդ դասարանների մի քանի աշակերտների հետ։ Եղածն այդ էր, որոնցից երբեք էլ իր դպրոցահասակ երեխաները։

Իսկ այս տարվա սեպտեմբերին աշակերտները պիտի բաժանվեին ըստ դասարանների, սակայն դրա համար պետք էին դասասենյակներ։ Եվ ահա ոչ ոք չի ուզում ձեռք մեկնել հայրենասեր նախաձեռնողին։ Եթե շրջանային լիազորված անձինք անուշադրություն են մատնում, ապա նրանց անտարբերություն ինչ-որ տեղ հասկանալի է։ Բայց գյուղական խորհրդի նախագահ Լյովա Բաղալյանը, որն ի պաշտոնե պարտավոր է ոչ միայն ոգեշնչել, այլև նախաձեռնել, իսկ կոլտնտեսության նախագահը պետք է ոգչուներ և նորոգման աշխատանքները կատարել տար, մնկը մյուսին գերազանցում են լռությամբ։ Եվ դպրոցի վարիչը դիմում է «Արցախ» հայրենակցական բարեգործական միությանը, ասելով.

«Դե ձեզ էլ փորձենք, փորձը փորձանք չէ»։

ԻԼՅԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ